

Տիգրան Մուրադյան

Արարարի մարզի դատախազության ավագ դատախազ

ՄԱՍՆԱՎՈՐ ՄԵՂԱԴՐԱՆՔՈՎ ՎԱՐՈՒՅԹԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՏԱԽԱՋԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՆԱՎՈՐ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ՎԱՐՈՒՅԹՆԵՐՈՒՄ¹

Համառոտագիր

Հետազոտության թեմայի արդիականությունը: Երկար ժամանակ մեր երկրի քրեադատավարական օրենսդրությունը հիմնված էր մեղադրական գործունեության իրականացման պետության մենաշնորհի վրա, որը ուներ ընդհանուր կանոնից անհատական բացառություններ: Բացառությունների մեջ էին մտնում, մասնավորապես, տուժողի բողոքի հիման վրա հարուցված և մեղադրյալի հետ նրա հաշտվելու հիմքով կարճման ենթակա գործերը: Միայն այս սահմաններում էր թույլատրվում մասնավոր մեղադրանքը: Մինչույն ժամանակ, տուժողի իրավունքը՝ ազդելու վարույթի սկսման և դադարեցման վրա սահմանափակվում էր՝ բողոք ներկայացնելով կամ բողոքից հրաժարվելով: Գործի վարույթի ամբողջ ընթացքը այս կամ այն չափով կախված էր պետական մեղադրողի (դատախազի) հայեցողությունից: 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսվել է ՀՀ քրեադատավարական նոր ինստիտուտ՝ մասնավոր մեղադրանքի վարույթը: Նշված ինստիտուտը ներպետական իրավական համակարգում նոր է մտել կիրառական դաշտ, ինչը նշանակում է, որ գործնական աշխատանքում կարող են առաջանալ մի շարք խնդիրներ, որոնց մի մասի քննարկումը կարող է նպաստել ճշգրիտ լուծումների հայտնաբերմանը, ինչով պայմանավորված է թեմայի արդիականությունը:

Ուսումնասիրության նպատակը և խնդիրները: Գիտական հոդվածի հիմնական նպատակը ՀՀ քրեական դատավարությունում մասնավոր մեղադրանքի տեսական և գործնական խնդիրների համապարփակ ուսումնասիրությունն է, քրեական դատավարության օրենսդրության կատարելագործման և դրա կիրառման պրակտիկայի առաջարկների մշակումը: Աշխատանքով խնդիր է դրված վեր հանել մասնավոր մեղադրանքով վարույթի կիրառման շրջանակներում հնարավոր առաջացող խնդիրները, քննարկել դրանց իրավական կարգավորումները, վեր հանել խնդրահարույց և արդյունավետ կողմերը, և որպես աշխատանքի նպատակ՝ առաջարկել դրանց համար որոշակի լուծումներ:

Մատնանշված հարցերի վերաբերյալ աշխատանքում կատարված նկատառումները կարող են էլ ավելի լավացնել գործող իրավակարգավորումները և ուղղված են մասնավոր մեղադրանքի վարույթի կատարելագործմանը:

¹ Հոդվածը ներկայացվել է 11.08.2025թ., գրախոսվել է 01.09.2025թ.:

Հոդվածում ընտրված թեման ուսումնասիրելիս կիրառվել են համեմատական իրավական և տրամաբանական հետազոտությունների մեթոդները:

Հիմնաբառեր- մասնավոր մեղադրանք, հանրային մեղադրանք, պետական մեղադրող, դատախազ, տուժող:

Ներածություն

Հոդվածում դիտարկվում է մասնավոր մեղադրանքի ինստիտուտը քրեադատավարական իրավունքում՝ որպես տուժողի իրավունքների պաշտպանության կարևոր մեխանիզմ: Ներկայացվում է մասնավոր մեղադրանքի սահմանումը, իրավական հիմքերը, ինչպես նաև դրա կիրառման ընթացակարգային առանձնահատկությունները: Վերլուծվում է մասնավոր մեղադրանքի տարբերությունը հանրային մեղադրանքից: Վերլուծվում է մասնավոր մեղադրանքի վարույթներին դատախազի մասնակցության վերաբերյալ որոշակի հիմնահարցեր:

1. Մասնավոր մեղադրանքի հայեցակարգը և մասնավոր մեղադրանքի կարգով իրականացվող հանցագործությունների շրջանակը

Քրեադատավարական գործունեությունն իրականացվում է պետության և ամբողջ հասարակության շահերից ելնելով՝ անկախ անհատի հայեցողությունից: Պետության և անհատի շահերի միջև հակասությունների առաջացման դեպքում նախապատվությունը տրվում է պետության շահերին: Այդ իսկ պատճառով, ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մեղադրանքի հիմնական տեսակը պետական (հանրային) մեղադրանքն է, որի պաշտպանող սուբյեկտը հանդիսանում է ՀՀ դատախազությունը՝ ՀՀ սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի ուժով: Բայց դրա հետ մեկտեղ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված մի խումբ հանցանքների վերաբերյալ վարույթները իրականացվում են մասնավոր մեղադրանքի կարգով:

Դատավարագետների կողմից առանձնացվել է մասնավոր մեղադրանքի մի քանի ձևեր, մասնավորապես՝ Ի. Յա. Ֆոյնիցկին իր «Քրեական դատավարության դասընթաց»-ում գրել է. «Մասնավոր մեղադրանքի հիմնական ձևերը, հետևյալն են՝

1. **հիմնական մեղադրանքը**, երբ մասնավոր անձը վերածվում է հանրային մեղադրողի և փոխարինում է դատախազին,

2. **փոխարինող մեղադրանքը**, երբ մասնավոր մեղադրողը ներգրավվում է այնպիսի գործով, որը պետք է քննի դատախազը, ով, սակայն, չի ցանկանում քրեական գործ հարուցել,

3. **լրացուցիչ մեղադրանքը**, երբ մասնավոր անձը գործում է դատախազի հետ համատեղ՝ ոչ թե վերացնելով, այլ միայն լրացնելով նրան»²:

Այսպիսով, հիմնական մասնավոր մեղադրանքը ամբողջությամբ բացառում էր պետական մարմինների ներգրավվածությունը քրեական հետապնդում իրականացնելուն և կախված էր՝ «ինչպես սկզբնական փուլում, այնպես էլ հետագա

² См.у Фойницкий И. Я. Курс уголовного судопроизводства: в 2 т. СПб., 1996. Т. 2. С. 31.

փուլերում՝ մասնավոր (տուժողի) հայեցողությունից»³: Այս դեպքերում քրեական հետապնդման հարուցումը կամ չհարուցումը թողնվել է տուժողի հայեցողությանը, և գործի քննության ընթացքում նրա իրավունքները հավասարեցվել են հանրային մեղադրողի իրավունքներին, բացառությամբ, իհարկե, հակառակ կողմի օգտին դատավճիռը բողոքարկելու իրավունքի: Այս դեպքում, մասնավոր մեղադրողը իրավունք ուներ խնդրել դատախազին ստանձնել մեղադրանքի իրականացումը դատարանում: Դատախազն ինքն էր որոշում՝ բավարարե՞լ այս խնդրանքը, թե՞ ոչ, սակայն մասնավոր մեղադրողը կարող էր բողոքարկել իր մերժումը վերադաս դատախազի մոտ: Եթե դատախազը որոշեր դատարանում աջակցել մեղադրանքի կողմին, նա պետք է գործեր մասնավոր մեղադրողի շահերից ելնելով՝ որպես նրա ներկայացուցիչ: Միևնույն ժամանակ, մասնավոր մեղադրողը պահպանում էր գործը հաշտեցման միջոցով ցանկացած պահի ավարտելու իրավունքը:

Սուբսիդիար մասնավոր հետապնդումը, որը Ի. Յա. Ֆոյնիցկիի կողմից անվանվել է փոխարինող մեղադրանք⁴, կարող է տեղի ունենալ այն ժամանակ, երբ դատախազը, ինչ-ինչ պատճառներով, հրաժարվի քրեական գործ հարուցել հանրային մեղադրանքի վերաբերյալ:

Ինչ վերաբերում է լրացուցիչ մասնավոր մեղադրանքին, Ի. Յա. Ֆոյնիցկին գրել է. տուժողը կարող է գրավոր հայտարարություն ներկայացնել դատարանին, որ ցանկանում է միանալ պաշտոնական մեղադրանքին: Դատարանը, քննելով այս դիմումը և լսելով դատախազի կարծիքը, կայացնում է համապատասխան որոշում, որից հետո նման լրացուցիչ մեղադրողը ձեռք է բերում մասնավոր մեղադրողի բոլոր իրավունքները: Քրեական հետապնդմանը մասնավոր անձի մասնակցության այս ձևը հնարավոր էր կյանքի, առողջության, ազատության և ունեցվածքի կամ սեփականության իրավունքների դեմ ուղղված հանցագործությունների, ինչպես նաև այսպես կոչված մասնավոր հանցագործությունների դեպքերում, եթե դրանց վերաբերյալ վարույթը հարուցվում էր հանրային կարգով⁵: Միևնույն ժամանակ, որոշ ռուս դատավարագետներ նշված կարգը անվանում էին որպես լրացուցիչ կամ զուգահեռ մեղադրանք կամ որպես երկրորդական մեղադրանք⁶:

Ինչպես պետք է լինի մասնավոր մեղադրանքի կարգով իրականացվող քրեական հետապնդումների հանցագործությունների ցանկը: Այս հարցի լուծումը, մեր կարծիքով, ուղղակիորեն կախված է նրանից, թե ինչն է հիմք ընդունվում որոշակի հանցագործությունները մասնավոր մեղադրանքի կարգով հետապնդվող հանցագործություններ առանձնացնելու համար:

Ուսումնասիրվող խնդրին նվիրված իրենց աշխատություններում դատավարության մասնագետները նշում են տարբեր հիմքեր, որոնց հիման վրա մի շարք հանցագործություններ հետապնդվում են մասնավոր հետապնդման կարգով: Այս

³ Տե՛ս Նույն տեղում՝ Շ. 31.

⁴ Տե՛ս Նույն տեղում՝ Շ. 31.

⁵ Տե՛ս նույն տեղում՝ Շ. 31.

⁶ Տե՛ս Лыкошин А. С. Частное обвинение // Брокгауз Ф. А., Ефрон И. А. Энциклопедический словарь. СПб., 1903. Т. XXXVIII. С. 412.

հիմքերի թիվը տատանվում է երկուսից մինչև ինը, ըստ տեսաբանների՝ Ն.Ն.Պոլյանսկիի⁷, Ս.Ի.Կատկալոյի և Վ.Զ.Լուկաշևիչի⁸։ Ըստ դատավարագետների, ինչո՞վ էր առաջնորդվում օրենսդիրը, երբ թույլատրում էր որոշակի հանցագործություններով քրեական հետապնդումը իրականացնել մասնավոր քրեական հետապնդման կարգով։

Գրեթե բոլոր տեսաբանները կարծում են, որ պատճառներից մեկն այն է, որ մասնավոր հետապնդման հանցագործությունների հանրային վտանգավորության աստիճանը համեմատաբար ցածր է⁹։ Հանրային վտանգավորության հասկացությունն ինքնին իրավաբանական տեսության մեջ սահմանվում է հետևյալ կերպ։ Այսպիսով, ըստ Վ.Ն. Կուրյավցևի՝ «հանցավոր գործողությունների հանրային վտանգավորությունը կայանում է այն վնասի մեջ, որը պատճառվում է կամ կարող է պատճառել պետությանը»¹⁰։ Ն. Ֆ. Կուզնեցովան նշում է, որ «հանցագործությունների հանրային վտանգավորությունը կայանում է նրանում, որ այն վնաս է պատճառում կամ ստեղծում է սոցիալիստական հասարակական հարաբերություններին որոշակի վնաս պատճառելու սպառնալիք»¹¹։ Օ. Ֆ. Շիշովան սոցիալական վտանգը հասկանում է որպես օբյեկտիվ սոցիալական սեփականություն, անձի արարքի հիմնական բովանդակությունը, որն ուղղված է սոցիալիստական սոցիալական հարաբերությունների դեմ։ Եվ քանի որ արդի ժամանակաշրջանում հարաբերությունների սոցիալիստական բնույթին հղումը թվում է ավելորդ, արտացոլելով ավելի շատ գաղափարախոսական, քան գիտական կողմ, կարելի է եզրակացնել, որ հանցագործության սոցիալական վտանգավորությունը կայանում է այն վնասի մեջ, որը այն պատճառում է կամ կարող է պատճառել սոցիալական հարաբերություններին¹²։

Արարքի հանրային վտանգավորության որակական կողմի և աստիճանի որոշման վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանը արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը՝

«14. Արարքի հանրային վտանգավորության բնույթը հանցագործության որակական կողմն է, այն որոշվում է մեղքի ձևի և տեսակի, հանցագործության նպատակի և շարժառիթի, ինչպես նաև քրեական օրենսդրությամբ պահպանվող հասարակական հարաբերության՝ հանցանքի կատարման պահին ունեցած

⁷ Ст'ю Полянский Н. Н. Процессуальные права потерпевшего // Сов. государство и право. 1940. №12. С. 58.

⁸ Ст'ю Каткало С. И., Лукашевич В. З. Судопроизводство по делам частного обвинения. Л.: ЛГУ, 1972. С. 44-45.

⁹ Ст'ю.: Каткало С. И., Лукашевич В. З. Указ. соч. С. 45; Маслов В. С. В защиту института частного обвинения в советском уголовном процессе // Вопросы государства и права: Материалы теоретической конференции по плановым работам, выполненным в 1963 г.; кандид. и доктор. диссертации. Свердловск, 1964. С. 138; Гальперин И. М. Об уголовном преследовании, осуществляемом потерпевшим в советском уголовном процессе // Сов. государство и право. 1957. № 10. С. 49; Божьев В. П. Особенности производства по делам частного обвинения // Рос. судья, 2001, № 7. С. 40 и др.

¹⁰ Ст'ю Кудрявцев В. Н. Что такое преступление. М., 1959, С. 8.

¹¹ Ст'ю Кузнецова Н. Ф. Преступление и преступность. М., 1969. С. 60.

¹² Ст'ю Шишов О. Ф. Преступление и административный проступок. М., 1967. С. 90.

սոցիալական նշանակության վերաբերյալ փաստական տվյալների ամբողջությամբ:

Արարքի հանրային վտանգավորության աստիճանի որոշման ժամանակ դատարանը պետք է բացահայտի կատարված հանցագործությամբ պատճառված վնասի չափը, հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հանցակցության դեպքում՝ հանցավորի կատարած արարքը և հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը»:¹³

Իսկ Օրինակ՝ Ա. Ֆոն Ռեստը մասնավոր մեղադրանքի ինստիտուտի առկայության դրդապատճառներից մեկը համարել է «տուժողի և հանցագործի միջև հատուկ հարաբերությունների գոյությունը և ընտանեկան միության սրբության նկատմամբ հարգանքը»¹⁴։ Նա գրել է. «Եթե հանցագործության զոհը և մեղավոր կողմը նույն ընտանիքի անդամներ են, ապա ակնհայտ է, որ պետական մարմնի չիրավիրված միջամտությունը երբեմն կարող է վերջնականապես ոչնչացնել ընտանեկան հարաբերությունները, որն արդեն խախտվել է կատարված հանցագործության պատճառով, և որն այլապես կվերականգնվեր մի կողմից ներմամբ, իսկ մյուս կողմից՝ զղջմամբ: Հետևաբար, բավականին արդարացի է, որ բոլոր այն դեպքերում, երբ հանցագործությունը դուրս չի գալիս ընտանեկան շրջանակից(...) քրեական հետապնդման նախաձեռնումը պետք է կախված լինի տուժողի հայեցողությունից»¹⁵։ Խորհրդային դատավարազետները, դատական պրակտիկայի լայնածավալ ուսումնասիրության հիման վրա, եկան այն եզրակացության, որ մասնավոր մեղադրանքի գործերը վերաբերում են հարաբերությունների որոշակի շրջանակի՝ ընտանիքի անդամների, ազգականների, ծանոթների, գործընկերների և բնակարանակիցների միջև հարաբերություններին (վերջինս պայմանավորված էր խորհրդային կյանքի առանձնահատկություններով, երբ բնակչության զգալի մասը ապրում էր կոմունալ բնակարաններում: Մարդիկ ամեն օր հանդիպում էին իրենց հարևանների հետ նման բնակարաններում՝ օգտվելով ընդհանուր տարածքներից, մասնավորապես՝ խոհանոցից և լոգարանից: Եվ քանի որ յուրաքանչյուր ընտանիքի անդամ ունեին իրենց պատկերացումները՝ կարգուկանոնի, մաքրության և ընդհանուր տարածքների պահպանման պարտականությունների բաշխման մասին, անխուսափելիորեն բռնկվում էին տարբեր կենցաղային հակամարտություններ): Ս. Ի. Կատկալոն և Վ. Զ. Լուկաշևիչը ճիշտ նշել են, որ «ընտանեկան և ամուսնական հարաբերությունները, ազգակցական, բարեկամական և գործընկերային հարաբերությունները կարող են անդառնալիորեն վնասվել, եթե արտաքին անձինք, հասարակական կազմակերպությունները կամ պետական մարմինները միջամտեն հակամարտության լուծմանը՝ տուժողի կամ քին հակառակ, ով, որպես կանոն, ավելի լավ է տեղեկացված հանցագործության

¹³ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գարուշ Նորիկի Մաղաթյանի* գործով 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ **ԵՇԴ/0029/01/08** որոշուման 14-րդ կետ:

¹⁴ Տե՛ս Резон фон А. О преступлениях, наказуемых только по жалобе потерпевшего по русскому праву. СПб., 1882. С. 57.

¹⁵ Տե՛ս նույն տեղում՝ С. 53.

պատճառների և հանգամանքների մասին¹⁶»։ Հետևաբար, օրենքը քաղաքացիներին հնարավորություն է տալիս լուծել նման «հակամարտությունները» իրենց հայեցողությամբ՝ առանց պետական մարմինների միջամտության։ Այս հնարավորությունը մնում է նույնիսկ այն բանից հետո, երբ տուժողը բողոք է ներկայացնում քրեական հետապնդում սկսելու համար։ Սա բացատրվում է նրանով, որ հիմնական նպատակը ծագած հակամարտության լուծումն է։ Եվ եթե տուժողը և մեղադրյալը հաշտվել են, և նրանց հարաբերությունները վերադարձել են բնականոն հուն, ապա անհրաժեշտություն չկա անձին քրեական պատասխանատվության ենթարկել։ Այս դեպքում դատական գործողությունները միայն կհանգեցնեն հակամարտության կողմերի միջև հարաբերությունների սրմանը։ Հետևաբար, գործի վարույթը ենթակա է կարճման՝ կողմերի հաշտեցման պատճառով։

Մեկ այլ դատավարագետ Ն. Ն. Կովտունը մասնավոր մեղադրանքի ինստիտուտի առկայության դրդապատճառներից մեկը համարել է հանցավորի կողմից ոտնձգության ենթարկված անմիջական օբյեկտի առանձնահատկությունները (պատիվ, արժանապատվություն, հեղինակություն, մարդու առողջություն)։ Այս իրավիճակում, «իրականում առաջանում և գոյություն ունի քրեաիրավական հարաբերություն «տուժող - հանցագործ» սուբյեկտիվ կազմով, այլ ոչ թե «պետություն - հանցագործ»... պետությունը... չունի և չի կարող իրավական պահանջներ ունենալ հանցագործություն կատարած անձի նկատմամբ, քանի որ նրա իրավունքներն ու շահերը այստեղ չեն խախտվում, և վիճարկվող իրավահարաբերությունը նրան չի պատկանում¹⁷»։

Այսպիսով, եթե վերլուծենք դատավարագետների կողմից նշված հիմքերը, որոնց հիման վրա մի շարք հանցագործություններով հետապնդումը իրականացվում է մասնավոր մեղադրանքի կարգով, ապա այդ հիմքերը հետևյալներն են՝

1. համեմատաբար ցածր հանրային վտանգի աստիճան,
2. հանցավոր ոտնձգության անմիջական օբյեկտի առանձնահատկությունները,
3. անձանց հատուկ շրջանակ, որոնց շահերի վրա ազդեցություն են ունենում այդ գործողություններով (ընտանիքի անդամներ, հարազատներ, ընկերներ, ծանոթներ, գործընկերներ),

4. և այլն։

Մենք կիսում ենք այն դատավարագետների կարծիքը, ըստ որոնց մասնավոր մեղադրանքի կարգով հետապնդման ենթակա հանցագործությունների ցանկը կազմվում է համեմատաբար ցածր հանրային վտանգավորություն ունեցող հանցագործություններից։

¹⁶ Ст'ю Катъкало С. И., Лукашевич В. 3. Судопроизводство по делам частного обвинения. Л.: ЛГУ, 1972. С. 36

¹⁷ Ст'ю Ковтун и. Н, Соотношение частных и публичных начал в уголовном судопроизводстве РФ: время выбора // Государство и право. 1995. №11. С. 69.

ՀՀ քրեական օրենսգրքի նախագծի հեղինակների կողմից որոշակի հանցագործություններ մասնավոր մեղադրանքի կարգով առանձնացնելու հիմքում ընկած է եղել արարքների հանցավոր վտանգավորության ցածր աստիճան՝ հաշվի առնելով հանցանքների այդ խմբի հանրային ոչ մեծ վտանգավորությունը, ինչպես նաև դրանց քննության համար նշանակություն ունեցող հանգամանքների համեմատաբար դյուրին պարզումը, Օրենսգիրքը վարության այս կարգավորումներում նախապատվությունը տվել է մասնավոր իրավահարաբերություններին հատուկ տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքին՝ հնարավորություն ընձեռելով անձին սեփական հայեցողությամբ ընտրել իր շահերի պաշտպանության միջոցները:¹⁸

Նշվածը, ըստ էության, հիմնավորվում է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի ուսումնասիրման արդյունքում, մասնավորապես՝

ՀՀ քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասին համաձայն՝

1. Սույն օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասով, 168-րդ հոդվածի 1-ին մասով, 169-րդ հոդվածի 1-ին մասով, 170-րդ հոդվածի 1-ին մասով, 171-րդ հոդվածի 1-ին մասով, 172-րդ հոդվածով, 173-րդ հոդվածով, 178-րդ հոդվածի 1-ին մասով, 180-րդ հոդվածի 1-ին մասով, 182-րդ հոդվածի 1-ին մասով, 194-րդ հոդվածի 1-ին մասով, 195-րդ հոդվածի 1-ին մասով, 227-րդ հոդվածի 1-ին մասով, 228-րդ հոդվածի 1-ին մասով, 253-րդ հոդվածի 1-ին մասով, 254-րդ հոդվածի 1-ին մասով, 255-րդ հոդվածի 1-ին մասով, 256-րդ հոդվածի 1-ին մասով, 257-րդ հոդվածի 1-ին մասով, 259-րդ հոդվածի 1-ին մասով, 262-րդ հոդվածի 1-ին մասով, 263-րդ հոդվածի 1-ին մասով, 264-րդ հոդվածի 1-ին մասով, 265-րդ հոդվածով կամ 266-րդ հոդվածով նախատեսված հանցանքը կատարած անձը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության միայն հանցագործությունից տուժածի քրեական հայցի հիման վրա, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերի:

ՀՀ քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածով սահմանված հանցագործությունները դասակարգվում են, ըստ հանցանքի տեսակների, ոչ մեծ ծանրության հանցագործությունների շարքին:

2. Դատախազի մասնակցությունը մասնավոր մեղադրանքի վարույթին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է չորս հիմք, որի առկայության պարագայում դատախազը մասնակցում է մասնավոր մեղադրանքի վարույթին, ընդ որում այդ հիմքերից երեքի առկայության պարագայում քրեական հետապնդումը իրականացվելու է հանրային կարգով և պետական մեղադրողը ստանձնում է պարտականություն մեղադրանքի պաշտպանություն իրականացնել նաև դատարանում, իսկ մեկի պարագայում սահմանափակվում է բացառապես

¹⁸ Տե՛ս Ղուկասյան Հ.Հ., Մելքոնյան Դ.Մ., Նիկողոսյան Ա.Ա., ՀՀ քր. դատ. նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, Եվրոպայի խորհուրդ, հուլիս, 2022 թ., էջեր 571-572:

մինչդատական վարույթի նկատմամբ օրինականության ստուգման շրջանակներով: Այդ հիմքերը հետևյալն են.

1. Ընտանիքում բռնության հատկանիշներով հանցանքները,

2. Եթե անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ վնաս պատճառողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը,

3. Եթե նույն անձին վերագրվող արարքների մի մասը ենթակա է քրեական հետապնդման հանրային կարգով, իսկ մյուս մասը՝ մասնավոր կարգով,

4. Եթե ենթադրյալ հանցանք կատարողի անձը հայտնի չէ:

Ինչպես արդեն նշվել է սույն հիմքերից երկուսը մեղադրանքի «փոխակերպման» հիմք են, այսինքն այդ հիմքերի ի հայտ գալու պահից մեղադրանքը իրականացվելու է պետական մեղադրողի՝ դատախազի ներգրավմամբ:

«Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն.

«1. Ընտանեկան և կենցաղային բռնություն է համարվում ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնի արարքը կամ անտեսումը, որը կատարվել է ընտանիքի անդամների կամ զուգընկերների կամ ընտանիքի նախկին անդամների կամ նախկին զուգընկերների միջև՝ անկախ նրանց համատեղ բնակվելու հանգամանքից:

2. Ընտանեկան և կենցաղային բռնության տեսակներն են՝

1) ֆիզիկական բռնություն՝ անձի կամքին հակառակ՝ ֆիզիկական բնույթի արարքը, ներառյալ՝ բժշկական, այդ թվում՝ հոգեբուժական բնույթի միջամտությունների ենթարկվելուն պարտադրելը, բժշկական օգնություն ստանալուց զրկելը կամ նման օգնությունը խոչընդոտելը, ֆիզիկական ցավ պատճառելը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի իմաստով՝ սպանությունը, առողջությանը ծանր, միջին ծանրության կամ թեթև վնաս պատճառելը, ազատությունից ապօրինի զրկելը, ֆիզիկական ներգործությունը, ֆիզիկական ուժեղ ցավ պատճառելը, վտանգի մեջ թողնելը, մարդուն առևանգելը.

2) սեռական բռնություն՝ անձի կամքին հակառակ սեքսուալ բնույթի գործողությունները, այդ թվում՝ անձի սեռական օրգաններին և մարմնի մասերին անցանկալի հպումները, անձին երրորդ անձի հետ սեքսուալ բնույթի գործողություններում ներգրավելը, կուսության ստուգումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի իմաստով՝ սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունները.

3) հոգեբանական բռնություն՝ անձին հոգեբանական ճնշում, հոգեկան տառապանք պատճառելը, ներառյալ՝ անձի ինքնագնահատականի և արժանապատվության պարբերաբար նվաստացումը, հարազատ երեխաների, ընկերների և հարազատների հետ շփումներն արգելելը կամ դրանք խոչընդոտելը, ինչպես նաև վերահսկողություն կիրառելը, ինքնավնասման կամ ինքնասպանության սպառնալիքով ճնշում գործադրելը, ֆիզիկական, տնտեսական բռնություն գործադրելու,

տնային կենդանիներին վնասելու սպառնալիքը, դիտավորությամբ այնպիսի գործողություններ կատարելը, որոնք անձի մեջ հիմնավոր վախ են հարուցում իր կամ հարազատի կամ զուգընկերոջ կամ ընկերոջ կամ խնամքի տակ գտնվողի անվտանգության համար, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի իմաստով՝ հոգեկան ներգործությունը կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, ինքնասպանությանը հասցնելը կամ հակելը, հղիության արհեստական ընդհատմանը (աբորտ կատարելուն) կամ ամլացմանը հարկադրելը, հետամտելը:

4) տնտեսական բռնություն՝ անձին հարկադրված նյութական կախվածության մեջ դնելը, նրան գոյության անհրաժեշտ միջոցներից (սննդից, հագուստից, կացարանից, դեղից, հիգիենիկ պարագաներից, օրենքով սահմանված նպաստից կամ կենսաթոշակից, այդ թվում՝ երեխայի համար տրամադրվող, աշխատավարձից և դրան հավասարեցված այլ վճարումներից) զրկելը, անձին սեփականության իրավունքով պատկանող կամ նրա կողմից տնօրինվող գույքը վնասելը, սեփականության կամ ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու իրավունքները ոչ իրավաչափ սահմանափակելը, անձի կամքին հակառակ՝ նրան վարկային կամ ֆինանսական գործարքներում ներգրավելը, անձին սեփականության իրավունքով պատկանող միջոցները և գույքը կտակելուն կամ նվիրաբերելուն հարկադրելը, անձի կրթություն ստանալու կամ աշխատանքի ընտրության ազատության իրավունքները սահմանափակելը:

5) անտեսում՝ ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի կողմից երեխայի կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում, կրթություն), իսկ չափահաս աշխատունակ զավակների կողմից իրենց անաշխատունակ և կարիքավոր ծնողների կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում) դիտավորությամբ չբավարարելը, եթե ծնողը կամ այլ օրինական ներկայացուցիչը կամ չափահաս աշխատունակ զավակները տիրապետում են պատշաճ տեղեկատվության և հնարավորությունների, և եթե համապատասխան ծառայությունները նրանց համար հասանելի են:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընտանեկան բռնությունը արմատավորված է հասարակության սոցիալական և մշակութային ընկալումների մեջ: Դրա նկատմամբ համապատասխան հետևողականություն չցուցաբերելը, ոչ պատշաճ քննությունը և անպատժելիությունը, հասարակության մեջ կարող են զարգացնել բռնության նկատմամբ հանդուրժողականություն: Նշվածով պայմանավորված լիարժեք ընդունելի է օրենսդրի մոտեցումը՝ ընտանիքում բռնության հատկանիշներով հանցագործություններով քրեական հետապնդում հանրային կարգով իրականացնելու վերաբերյալ:

Ընդ որում՝ պետության ոչ արդյունավետ արձագանքը կարող է հանգեցնել տուժողների այնպիսի հիմնական իրավունքների խախտմանը, ինչպիսիք են՝ կյանքի իրավունքը, խոշտանգումներից և այլ դաժան, անմարդկային կամ

նվաստացնող վերաբերմունքից զերծ լինելու իրավունք, ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը, օրենքի առջև հավասար պաշտպանության իրավունքը, խտրականության արգելումը, անձնական և ընտանեկան կյանքի իրավունքը, արդար դատաքննության իրավունքը, իրավական պաշտպանության միջոցի իրավունքը, հնարավոր լավագույն չափանիշներին համապատասխան՝ ֆիզիկական և հոգեկան առողջության իրավունքը:

Ընդ որում՝ ընտանեկան բռնությանը վերաբերող հանցագործություններին պետական արձագանքը և դրանց քննությանն ուղղված միջոցառումները պետք է ձեռնարկվեն այն հաշվառմամբ, որ քրեական արդարադատության համակարգի ընդհանուր և խտրական պասիվությունը բացառվի և չստեղծվի այնպիսի մթնոլորտ, որը նպաստի ընտանեկան բռնությանը:¹⁹

Մեր կարծիքով անօգնական վիճակում գտնվող անձ հասկացությունը պետք է մեկնաբանվի որպես անձ, ով իր ֆիզիկական կամ հոգեկան վիճակով պայմանավորված կամ տարիքային առանձնահատկություններից ելնելով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը:

Սրա հետ մեկտեղ քրեական հետապնդումը իրականացվում է հանրային կարգով նաև այն դեպքում, երբ տուժողը ենթադրյալ վնաս պատճառողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը: Կախվածության իրավիճակները տարբեր կարող են լինել, օրինակ՝ նյութական, ֆիզիկական, տնտեսական և այլն:

Միևնույն ժամանակ նշված հանգամանքների առկայության պարագայում բացառվում է քրեական պատասխանատվությունից ազատումը տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության հիմքով:

Նշվածի հետ կապված որոշակի խնդրահարույց իրավիճակ կարող է առաջանալ ենթադրյալ վնաս պատճառողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով հանրային կարգով քրեական հետապնդում իրականացնելու հետ կապված, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածը, որևէ սահմանափակում չի նախատեսում տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու համար՝ կախված ենթադրյալ վնաս պատճառողից կախվածության մեջ լինելու հանգամանքով: Մեր կարծիքով, եթե ենթադրյալ վնաս պատճառողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով քրեական հետապնդումը պետք է իրականացվի հանրային կարգով, ապա վարույթի ընթացքը չի կարող կախված լինել տուժողի կամքից:

Մեր կարծիքով չնայած նրան, որ ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածում ուղիղ սահմանափակում առկա չէ, սակայն այդ սահմանափակումները պետք է դիտարկել այն իմաստով, որ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսվում է ինքնուրույն և ազատ կամարտահայտությունը որպես նշված նորմի կիրառման պայման:

¹⁹ Տե՛ս Եվրոպական դատարանի՝ Opuz v. Turkey գործով 2009 թվականի հունիսի 9-ի վճիռը, գանգատ թիվ 33401/02:

Հետևաբար՝ այդ դեպքում, երբ մասնավոր մեղադրանքով վարույթը փոխակերպվում է հանրային մեղադրանքի վարույթով, այն հիմքով, որ ենթադրյալ վնաս պատճառողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը, ապա հանցագործությունից տուժած անձի ազատ կամաարտահայտության մասին խոսք լինել չի կարող:

Միևնույն ժամանակ նշված հանգամանքը բխում է նաև նրանից, որ մասնավոր քրեական հետապնդման ինստիտուտի ներդրման հիմքում դրվել է մինչդատական վարույթի բեռնաթափման հաշվին պետական միջոցների խնայողության հանգամանքը²⁰, հետևաբար տրամաբանական չի կարող համարվել այն, որ մասնավոր մեղադրանքի կարգով իրականացվող քրեական հետապնդումը իրականացվի հանրային կարգով, սակայն վարույթի ավարտը այս կամ այն ձևով կախված լինի տուժողի հայեցողությունից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե նույն անձին վերագրվող արարքների մի մասը ենթակա է քրեական հետապնդման հանրային կարգով, իսկ մյուս մասը՝ մասնավոր կարգով, ապա քրեական հետապնդումն իրականացվում է հանրային կարգով:

Նշված մոտեցումը, ըստ էության, նույնպես բխում է նրանից, որ մասնավոր քրեական հետապնդման ինստիտուտի ներդրման հիմքում դրվել է մինչդատական վարույթի բեռնաթափման հաշվին պետական միջոցների խնայողության հանգամանքը, քանի որ միևնույն է, եթե արարքներից մի մասը պետք է իրականացվի հանրային կարգով, ապա մինչդատական վարույթի բեռնաթափում և պետական միջոցների խնայում չի կարող տեղի ունենալ, մեր կարծիքով դրանով էլ պայմանավորված օրենսդիրը նախատեսել է, որ այն դեպքերում, երբ արարքներից մի մասը պետք է իրականացվի հանրային, իսկ մյուսը՝ մասնավոր կարգով, ապա վարույթը ամբողջությամբ պետք է իրականացվի հանրային կարգով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

«(...)3. Եթե հաղորդումով փաստվող դեպքին, գործողությանը կամ անգործությանը կարող է տրվել միայն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական, ապա քրեական վարույթ նախաձեռնելու պարտականությունն առաջանում է միայն այն դեպքում, երբ տվյալ հաղորդումը ներկայացրել է ենթադրյալ հանցանքից տուժած անձը կամ նրա ներկայացուցիչը, և միաժամանակ նրան հայտնի չէ ենթադրյալ հանցանքը կատարած անձը(...)»

Սրանից բխում է, որ բոլոր այն դեպքերում, երբ հայտնի չէ ենթադրյալ հանցանք կատարած անձը, ապա քննիչը պարտավոր է քրեական վարույթ նախաձեռնելու:

²⁰ Տե՛ս Ղուկասյան Հ.Հ., Մելքոնյան Դ.Մ., Նիկողոսյան Ա.Ս., ՀՀ քր. դատ. նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, Եվրոպայի խորհուրդ, հուլիս, 2022 թ., էջեր 571-572:

Բնականաբար դատախազը մինչդատական քրեական վարույթի օրինակա-նության նկատմամբ հսկողություն իրականացնելու գործառույթով պայմանավոր-ված ներգրավված է լինելու նշված վարույթներին:

Նշվածի կապակցությամբ գործնականում խնդրահարույց կարող է համարվել, թե որն է համարվում հայտնի չէ հանցանք կատարած անձը: Մեր կարծիքով, հանցանք կատարած անձը հայտի լինել կարող է համարվել այն իրավիճակում, երբ հայտնի է անձի անունը, ազգանունը և բնակության կամ հաշվառման վայրը: Նշվածը բխում է նրանից, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 451-րդ հոդվածի համաձայն քրեական հայցը պետք է բովանդակի նշված հանգա-մանքների վերաբերյալ տվյալներ, և նույն օրենսգրքի 452-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն քրեական վարույթ սկսելը մերժվում է, եթե՝ ենթադրյալ հանցանք կատարած անձը հայտնի չէ: Նույն օրենսգրքի 453-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Քրեական վարույթը սկսելու մասին որոշման մեջ նշվում են(...) մեղադրյալի անունը, ազգանունը և բնակության կամ հաշվառման վայրը(...): Բնականաբար նշված տվյալները դատարանին է փոխանցվում քրեական հայցի միջոցով՝ հանցագործությունից տուժած անձի կողմից:

Այսպիսով, օրինակ՝ այն դեպքերում, երբ տուժողը ճանաչում է հանցանք կատա-րած անձին, սակայն չգիտի վերջինիս փաստացի բնակության կամ գրանցման հասցեն, ապա վերջինիս կողմից հաղորդում ներկայացնելու պարագայում պետք է քրեական վարույթ նախաձեռնվի և իրականացվի մինչդատական վարույթ:

Քրեական վարույթ նախաձեռնելու պարագայում քրեական վարույթը կարող է կարճվել միայն այն պարագայում, երբ ձեռք է բերվել քրեական հետապնդում հարուցելու աստիճանին բավարարող ապացույցներ: Նշված հանգամանքը բխում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի կարգա-վորումներից, համաձայն որի՝ քրեական վարույթը ենթակա է կարճման, երբ մինչդատական վարույթի ընթացքում հայտնաբերվել է մասնավոր մեղադրանքի կարգով **քրեական հետապնդման ենթակա** ենթադրյալ հանցանք կատարած անձը:

Նմանատիպ մոտեցում առկա է նաև ՌԴ սահմանադրական դատարանի 27.06.2005թ. թիվ 7-Ո որոշմամբ:²¹

Վերոգրյալ հանգամանքներով պայմանավորված կարող է ողջամիտ հարց առաջանալ, եթե մասնավոր մեղադրանքի ինստիտուտի ներդրման համար հիմք է ծառայել մինչդատական վարույթի բեռնաթափման հաշվին պետական միջոցների խնայողության հանգամանքը, ապա այն դեպքում, երբ հանցանք կատարած ան-ձանց հայտնի չլինելու հիմքով իրականացվում է մինչդատական վարույթ, ծանրա-բեռնվում է նախաքննական մարմինը և ծախսվում են պետական միջոցները, ինչու պետք է վարույթի եզրափակիչ փուլում քրեական վարույթը կարճվի՝ դատարան դիմելու հարցը թողնելով տուժողի վրա:

Նշվածի կապակցությամբ պետք է հաշվի առնել նաև տուժողի որոշակի շահագրգռվածությունը, օրինակ՝ տուժողից մանր չափերով գողություն կատարված լինելու պարագայում վերջինիս հաղորդման հիման վրա նախաձեռնվում է քրեական

²¹ Տե՛ս https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_54270/ (11.05.2025)

վարույթ, պարզվում է ենթադրյալ հանցանք կատարած անձի ինքնությունը, հավաքվում են վերջինիս մեղավորության մասին վկայող ապացույցներ, սակայն վարույթը դատարան չի փոխանցվում, քանի որ տուժողի կամքը բացակայել է, կամ տուժողը ստացել է իրեն պատճառված վնասի փոխհատուցումը և այլ:

Նման իրավիճակը կարող է ամենաթողության մթնոլորտ ձևավորել, հանցավոր հակում ունեցող անձինք կարող են օգտվել նշված կարգավորումներից, ամեն անգամ կատարել մանր չափերի հասնող գաղտնի հափշտակություններ և բացահայտվելու պարագայում փոխհատուցել իրենց կողմից պատճառած վնասը, և տուժողը քրեական հայցը դատարան չներկայացնի և այսպես շարունակ: Այստեղ կարևոր է ընկալել այն հանգամանքը, որ քրեական արդարադատության նպատակը միայն հանցագործությունից տուժած անձանց իրավունքների պաշտպանությունը չէ, այլ հասարակարգի պահպանումն ու հանցավոր հակումներ ունեցող անձանց զսպումն է:

Մեր կարծիքով, երբ մինչդատական վարույթը ծանրաբեռնվում է և ծախսվում են պետական միջոցներ, ապա նշված վարույթը դատարան փոխանցելու փոխարեն այն կարճելը տրամաբանական չէ և չի բխում մասնավոր մեղադրանքի ինստիտուտի նպատակներից:

Մեր կարծիքով ճիշտ լուծում կարող է համարվել այն, որ իրականացվի օրենսդրական փոփոխություն և բոլոր այն դեպքերում, երբ հանցանք կատարած անձը հայտնի չէ, վարույթը իրականացվի հանրային քրեական հետապնդման կարգով:

Նման մոտեցումը, կարծում ենք, լիարժեք արդարացված կլինի, քանի որ հանցանք կատարած անձին հայտնաբերելու և վերջինիս մեղավորությունը ապացուցելու համար պետական միջոցներ ծախսելուց հետո ավելի նպատակահարմար կլինի մեղադրանքը շարունակել քրեական հետապնդման կարգով, և քրեական վարույթը փոխանցել դատարան՝ ըստ էության քննության առնելու նպատակով: Նշված իրավիճակում անգամ տուժողի և հանցանք կատարած անձի միջև հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատվելու պարագայում նույն հիմքով հանցանք կատարած անձը զրկված է լինելու քրեական պատասխանատվությունից ազատվելու հնարավորությունից:

Մեր կարծիքով մեկ այլ խնդրահարույց իրավավիճակ ևս առկա է մասնավոր մեղադրանքի ինստիտուտի վերաբերյալ իրավակարգավորումներում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 456-րդ հոդվածի համաձայն՝ Հիմնական դատախոսների ընթացքում մասնավոր կարգով իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվում է, և քրեական վարույթը կարճվում է, եթե՝

- 1) տուժողը և մեղադրյալը հաշտվել են.
- 2) տուժողը հրաժարվել է մեղադրանքից.
- 3) տուժողը և նրա ներկայացուցիչն առանց հարգելի պատճառի երկու անգամ չեն ներկայացել դատական նիստին:

Նշված հիմքերից բացի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածով ևս սահմանված են որոշակի հիմքեր, որոնց առկայության դեպքում

քրեական հետապնդում չպետք է հարուցվի, իսկ հարուցված քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման:

Մեր կարծիքով որոշակի խնդրահարույց իրավիճակ կարող է առաջանալ այն պարագայում, երբ, օրինակ՝ ենթադրյալ հանցանք կատարած անձն օժտված է անձեռնմխելիությամբ:

Նման իրավիճակում հանցագործությունից տուժած անձը կանգնելու է իր համար անհաղթահարելի փաստի առաջ, քանի որ վերջինս զրկված է լինելու քրեական հայց ներկայացնելու հնարավորությունից, պայմանավորված այն հանգամանքով, որ քրեական հետապնդում չի կարող հարուցվել այն անձի վերաբերյալ, ով օժտված է անձեռնմխելիությամբ և իրավասու մարմինը պատշաճ իրավական ընթացակարգի արդյունքում ենթադրյալ հանցանք կատարած անձին չի զրկել անձեռնմխելիությունից:

Ազգային ժողովի կանոնակարգ սահմանադրական օրենքի 108-րդ հոդվածի համաձայն՝ «Պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ նրան ազատությունից զրկելուն համաձայնություն տալու մասին միջնորդագիրը ներկայացնում է գլխավոր դատախազը:(...)»

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ հետի համաձայն՝ «Մինչդատական վարույթի ընթացքում հսկող դատախազը՝ (...) իրավասու վերադաս դատախազին առաջարկում է դիմել իրավասու մարմիններ՝ քրեական հետապնդման անձեռնմխելիությունից օգտվող անձանց նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրանց ազատությունից զրկելու համաձայնություն ստանալու միջնորդությունով(...):»

Ինչպես արդեն նշվեց մասնավոր մեղադրանքի կարգով իրականացվող քրեական հետապնդումներով մինչդատական վարույթ, հետևաբար՝ դատախազի ներգրավվածությունը նշված վարույթին, հնարավոր է միայն այն դեպքում, երբ հանցանք կատարած անձը հայտնի չէ, նշված իրավիճակից դուրս բոլոր դեպքերում օրենսդիրը դատախազի ներգրավվածության հնարավորություն չի նախատեսել:

Նշված հանգամանքներից հետևում է, որ անձեռնմխելիության հաղթահարման գործընթաց կարող է իրականացվել բացառապես հանրային քրեական հետապնդման կարգով վարույթի շրջանակներում:

Այսպիսով, օրինակ պատգամավորի կողմից ֆիզիկական ներգործության ենթարկված անձը զրկված է լինելու իր իրավաչափ շահերը պաշտպանելու հնարավորությունից, քանի որ ազգային ժողովի պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու վերաբերյալ միջնորդագիր կարող է ներկայացնել բացառապես ՀՀ գլխավոր դատախազը:

Նման իրավիճակում տուժողը հայտնվում է ավելի վատ վիճակում, քան հանցանք կատարած անձը, քանի որ չունի գործիքակազմ որոշակի անձանց անձեռնմխելիության հաղթահարման համար:

Մեր կարծիքով նման իրավիճակները բացառելու համար ավելի նպատակահարմար կլինի ՀՀ քրեական օրենսգրքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետը ունենար հետևյալ բովանդակությունը՝ Հայաստանի Հանրապետության քրեական

օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքներով, եթե անձն իր անօգնական վիճակի, ենթադրյալ վնաս պատճառողից կախվածության մեջ լինելու կամ այլ պատճառներով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը:

«Այլ պատճառներ» հասկացության ներքո դատախազը իր նախաձեռնությամբ քրեական հետապնդումը կարող է իրականացնել հանրային կարգով և նախաձեռնել համապատասխան գործընթաց անձեռնմխելիության հաղթահարման ուղղությամբ:

Նշված կազուսային իրավիճակը հաղթահարելու և հանցագործությունից տուժած անձանց իրավունքները պաշտպանելու նպատակով, կարող է քրեական հետապնդումը իրականացվել հանրային կարգով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի ուժով՝ տուժողին դիտարկել, որպես անօգնական վիճակում գտնվող անձ, ով գրկված է իր իրավաչափ շահերը պաշտպանելու հնարավորությունից, սակայն նման մոտեցումը, ինչպես արդեն նշվեց, պայմանավորված է բացառապես հանցագործությունից տուժած անձի իրավունքների պաշտպանության հանգամանքից: Ինչպես արդեն աշխատանքում նշվել է՝ անձի անօգնական վիճակ ասելով պետք է հասկանալ անձ, ով իր ֆիզիկական կամ հոգեկան վիճակով պայմանավորված կամ տարիքային առանձնահատկություններից ելնելով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը:

Հարկ է նկատել նաև այն, որ մասնավոր մեղադրանքի վարույթները՝ հանրային մեղադրանքի փոխակերպվելու պարագայում հանցագործությամբ տուժած անձինք չեն մեկուսացվում քրեադատավարական գործընթացներից, նրանք ունենալու են տուժողի դատավարական կարգավիճակ, հետևաբար կրելու են տուժողի բոլոր իրավունքները և պարտականությունները:

Եզրակացություն

Գիտական հոդվածի շրջանակներում հետազոտվեց ՀՀ քրեական դատավարությունում մասնավոր մեղադրանքի տեսական և գործնական խնդիրները, մասնավորապես՝ ուսումնասիրվել է դատավարագետների կողմից մասնավոր մեղադրանքի ինստիտուտի վերաբերյալ առկա տեսական և գործնական մոտեցումները: Աշխատանքի շրջանակներում վեր են հանվել դատավարագետների կողմից առանձնացված մասնավոր մեղադրանքի մի քանի ձևեր, որոնք են՝ հիմնական մեղադրանքը, փոխարինող մեղադրանքը և լրացուցիչ մեղադրանքը: Ներկայացվել են վերջիններիս տարբերությունները և առանձնահատկությունները:

Իրականացվել է քրեական դատավարության օրենսդրության կատարելագործման և դրա կիրառման պրակտիկայի առաջարկների մշակումը: Աշխատանքում վեր հանվեց այն չորս հիմքերը, որոնց առկայության պարագայում դատախազը մասնակցում է մասնավոր մեղադրանքի վարույթին, մասնավորապես՝ 1) Ընտանիքում բռնության հատկանիշներով հանցանքները, 2) եթե անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ վնաս պատճառողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը, 3) եթե նույն անձին վերագրվող արարքների մի մասը ենթակա է

քրեական հետապնդման հանրային կարգով, իսկ մյուս մասը՝ մասնավոր կարգով, 4) եթե ենթադրյալ հանցանք կատարողի անձը հայտնի չէ:

Աշխատանքում վեր են հանվել և ներկայացվել նշված հիմքերի վերաբերյալ օրենսդրական խնդրահարույց կարգավորումները, և առաջարկ է ներկայացվել դրանց լուծման համար՝ մասնավոր մեղադրանքի ինստիտուտի զարգացման և կատարելագործման համար ապահովվելով դատախազի պատշաճ ներգրավվածությունը մասնավոր մեղադրանքի վարույթներով, որը հնարավորություն է ապահովվում հանցագործությունից տուժած անձանց իրավունքների պաշտպանության գործում:

Աշխատանքում վեր հանվեց մասնավոր մեղադրանքով վարույթի կիրառման շրջանակներում հնարավոր առաջացող խնդիրները, քննարկվեց դրանց իրավական կարգավորումները, վեր հանվեց խնդրահարույց և արդյունավետ կողմերը, և ներկայացվեց դրանց համար արդյունավետ լուծման տարբերակներ: Աշխատանքում ներկայացվել է մի շարք խնդրահարույց կարգավորումներ և դրանց լուծման հնարավոր տարբերակներ, ի թիվս այլնի, մասնավորապես՝ աշխատանքում վեր է հանվել որոշակի խնդրահարույց իրավիճակ, որը կարող է առաջանալ այն պարագայում, երբ, օրինակ՝ ենթադրյալ հանցանք կատարած անձն օժտված է անձեռնմխելիությամբ: Նման իրավիճակում հանցագործությունից տուժած անձը կանգնելու է իր համար անհաղթահարելի փաստի առաջ, քանի որ վերջինս զրկված է լինելու քրեական հայց ներկայացնելու հնարավորությունից, պայմանավորված այն հանգամանքով, որ քրեական հետապնդում չի կարող հարուցվել այն անձի վերաբերյալ, ով օժտված է անձեռնմխելիությամբ և իրավասու մարմինը պատշաճ իրավական ընթացակարգի արդյունքում ենթադրյալ հանցանք կատարած անձին չի զրկել անձեռնմխելիությունից: Նշված արգելքի հաղթահարման համար աշխատանքում առաջարկվել է հետևյալ լուծումը. ՀՀ քրեական օրենսգրքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետը ունենար հետևյալ բովանդակությունը՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքներով, եթե անձն իր անօգնական վիճակի, ենթադրյալ վնաս պատճառողից կախվածության մեջ լինելու կամ այլ պատճառներով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը:

«Այլ պատճառներ» հասկացության ներքո դատախազը իր նախաձեռնությամբ քրեական հետապնդումը կարող է իրականացնել հանրային կարգով և նախաձեռնել համապատասխան գործընթաց անձեռնմխելիության հաղթահարման ուղղությամբ:

Բացի վերոնշյալ առաջարկից աշխատանքում առկա են նաև այլ առաջարկներ, որոնք ուղղված են մասնավոր մեղադրանքի վարույթի կատարելագործմանը և հանցագործությունից տուժած անձանց իրավունքների պաշտպանությանը:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. ՀՀ սահմանադրություն, ընդունվել է 06.12.2015թ., ուժի մեջ մտել՝ 22.12.2015թ.,

Constitution of the Republic of Armenia, adopted on 06.12.2015, entered into force on 22.12.2015,

2. ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն, ընդունվել է 05.05.2021 թ., ուժի մեջ մտել՝ 01.07.2022 թ.,

The Criminal Code of the Republic of Armenia, HO-199-N, adopted on 05.05.2021, entered into force on 01.07.2022,

3. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ՀՕ-306-Ն ընդունվել է 30.06.2021թ., ուժի մեջ մտել՝ 01.07.2022թ.,

Criminal Procedure Code of the Republic of Armenia, HO-306-N, adopted on 05.05.2021, entered into force on 01.07.2022,

4. «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-320-Ն ընդունվել է 13.12.2017թ., ուժի մեջ մտել՝ 31.01.2018թ.,

Law of the Republic of Armenia on Prevention of Domestic and Gender-Based Violence and Protection of Persons Subjected to Domestic and Gender-Based Violence, HO-320-N, adopted on 13.12.2017, entered into force on 31.01.2018,

5. Ղուկասյան Հ.Հ., Մելքոնյան Դ.Մ., Նիկողոսյան Ա.Ս., ՀՀ քր. դատ. նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, Եվրոպայի խորհուրդ, հուլիս, 2022 թ.

Ghukasyan H.H., Melkonyan D.M., Nikoghosyan A.S., Practical Guide to the Conceptual Solutions, Innovative Approaches, and Interpretation of the Main Institutions of the New Criminal Procedure Code of the Republic of Armenia, Council of Europe, July 2022.

6. Фойницкий И. Я. Курс уголовного судопроизводства: в 2 т. СПб., 1996. Т. 2. Foinitsky I. Ya., Course of Criminal Procedure: in 2 volumes. St. Petersburg, 1996. Vol. 2.

7. Полянский Н. Н. Процессуальные права потерпевшего // Сов. государстао и право. 1940. №12.

Polyansky N. N., Procedural Rights of the Victim // Soviet State and Law. 1940. No. 12.

8. Катькало С. И., Лукашевич В. З. Судопроизводство по делам частного обвинения. Л.: ЛГУ, 1972.

Katkalo S. I., Lukashevich V. Z., Proceedings in Private Prosecution Cases. Leningrad: Leningrad State University, 1972.

9. Кудрявцев В. Н. Что такое преступление. М., 1959, Kudryavtsev V. N., What Is a Crime. Moscow, 1959.

10. Кузнецова Н. Ф. Преступление и преступность. М., 1969.

Kuznetsova N. F., Crime and Criminality. Moscow, 1969.

11. Шишов О. Ф. Преступление и административный проступок. М., 1967.

Shishov O. F., Crime and Administrative Offense. Moscow, 1967.

12. Резон фон А. О преступлениях, наказуемых только по жалобе потерпевшего по русскому праву. СПб., 1882.

Reson von A., On Crimes Punishable Only upon Complaint by the Victim under Russian Law. St. Petersburg, 1882.

13. Катькало С. И., Лукашевич В. З. Судопроизводство по делам частного обвинения. Л.: ЛГУ, 1972.

Katkalo S. I., Lukashevich V. Z., Proceedings in Private Prosecution Cases. Leningrad: Leningrad State University, 1972.

14. Катькало С. И., Лукашевич В. З. Судопроизводство по делам частного обвинения. Л.: ЛГУ, 1972.

Katkalo S. I., Lukashevich V. Z., Proceedings in Private Prosecution Cases. Leningrad: Leningrad State University, 1972.

15. Ковтун И. Н. Соотношение частных и публичных начал в уголовном судопроизводстве РФ: время выбора // Государство и право. 1995. №11.

Kovtun I. N., The Relationship between Private and Public Principles in the Criminal Procedure of the Russian Federation: A Time of Choice // State and Law. 1995. No. 11.

16. Лыкошин А. С. Частное обвинение // Брокгауз Ф. А., Ефрон И. А. Энциклопедический словарь. СПб., 1903. Т. XXXVIII.

Lykoshin A. S., Private Prosecution // Brockhaus F. A., Efron I. A., Encyclopedic Dictionary. St. Petersburg, 1903. Vol. XXXVIII.

17. Վճռաբեկ դատարանի՝ Գարուշ Նորիկի Մադաթյանի գործով 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԴ/0029/01/08 որոշում:

Decision No. ESHD/0029/01/08 dated February 17, 2009, of the Court of Cassation in the case of Garush Norik Madatyan

18. Եվրոպական դատարանի՝ Opuz v. Turkey գործով 2009 թվականի հունիսի 9-ի վճիռը, գանգատ թիվ 33401/02

Judgment of the European Court of Human Rights in the case of Opuz v. Turkey, dated 9 June 2009, Application No. 33401/02.

19. https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_54270/ (11.05.2025)

Tigran Muradyan

Senior Prosecutor of the Prosecutor's Office of Ararat region

THE NATURE OF PRIVATE PROSECUTION PROCEEDINGS AND THE INVOLVEMENT OF THE PROSECUTOR IN PRIVATE PROSECUTION PROCEEDINGS²²

Abstract

Relevance of the topic of research. For a long time, the criminal procedural legislation of our country was based on the monopoly of the state on the implementation of prosecutorial activity, which had individual exceptions to the general rule. The exceptions included, in particular, cases initiated on the basis of the victim's complaint and subject to termination on the basis of his reconciliation with the accused. Only within these limits was private prosecution allowed. At the same time, the victim's right to influence the commencement and termination of proceedings was limited to filing a complaint or refusal to file a complaint. The entire course of the proceedings depended to a greater or lesser extent on the discretion of the public prosecutor (procurator). The Criminal Procedure Code of the Republic of Armenia, adopted on June 30, 2021, envisages a new criminal procedural institute of the Republic of Armenia - proceedings on private accusation. The mentioned institute in the domestic legal system has just entered the applied sphere, which means that a number of factors may arise in practical work, discussion of some of them may contribute to the search for accurate solutions, which determines the relevance of the topic.

Aim and objectives of the research. The main purpose of the research article is to comprehensively study the theoretical and practical problems of private prosecution in the RA criminal proceedings, to develop proposals for the improvement of the criminal procedural legislation and the practice of its application.

Keywords: private prosecution; public prosecution; public prosecutor; prosecutor; victim.

²² The article was presented on 11.08.2025 and was reviewed on 01.09.2025.

Тигран Мурадян

Старший прокурор прокуратуры Араратской области

СУЩНОСТЬ ПРОИЗВОДСТВА ПО ЧАСТНОМУ ОБВИНЕНИЮ И УЧАСТИЕ ПРОКУРОРА В ПРОИЗВОДСТВЕ ПО ЧАСТНОМУ ОБВИНЕНИЮ²³

Абстракт

Актуальность темы исследования. Долгое время уголовно-процессуальное законодательство нашей страны основывалось на монополии государства на осуществление обвинительной деятельности, которая имела индивидуальные исключения из общего правила. Исключения включали, в частности, дела, возбужденные на основании жалобы потерпевшего и подлежащие прекращению на основании его примирения с обвиняемым. Только в этих пределах было разрешено частное обвинение. В то же время, право потерпевшего влиять на начало и прекращение производства ограничивалось подачей жалобы или отказом в подаче жалобы. Весь ход производства по делу в той или иной степени зависел от усмотрения государственного обвинителя (прокурора). Уголовно-процессуальным кодексом РА, принятым 30 июня 2021 года, предусмотрен новый Уголовно-процессуальный институт РА-производство по частному обвинению. Указанный институт во внутригосударственной правовой системе только что вошел в прикладную сферу, что означает, что в практической работе может возникнуть ряд факторов, обсуждение некоторых из них может способствовать поиску точных решений, что обуславливает актуальность темы.

Цель и задачи исследования. Основной целью научной статьи является всестороннее изучение теоретических и практических проблем частного обвинения в уголовном судопроизводстве РА, разработка предложений по совершенствованию уголовно-процессуального законодательства и практики его применения. задачей работы является выявление возможных проблем, возникающих в рамках применения производства по частному обвинению, обсуждение их правового регулирования, выявление проблемных и эффективных аспектов, и в качестве цели работы-предложить для них определенные решения:

Соображения, сделанные в работе по указанным вопросам, могут еще больше улучшить существующее правовое регулирование и направлены на совершенствование производства по частному обвинению.

При изучении выбранной темы в статье были применены методы сравнительного правового и логического исследования.

Ключевые слова: частное обвинение; публичное обвинение; государственный обвинитель; прокурор; потерпевший.

²³ Статья была представлена 11.08.2025 и прошла рецензирование 01.09.2025